ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 382- Ա **26 հուլիսի 2016 թ.**

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի կենսագործունեությանն առնչվող հիմնախնդիրները լավագույնս լուսաբանելու համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից 420000 /չորս հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ սոցիալական աջակցության նպատակով հատկացնել մամուլի և զանգվածային լրատվամիջոցների աշխատակիցներին՝ յուրաքանչյուրին 30000 /երեսուն հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով տասնօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ [redacted] ԴԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ